

1996-2019թթ. ԱՐՄՍՍՍՍ-ի կողմից աղքատության մակարդակի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունները

Հանրության շրջանում աղքատության վերացումը և անհավասարության նվազեցումը Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ոլորտային քաղաքականության կարևորագույն նպատակներից են: Այդ նպատակների իրագործման առաջընթացը մշտադիտարկման ենթարկելու և փաստերի վրա հիմնված հանրային քաղաքականության ձևավորմանն աջակցելու համար տնտեսական բարեկեցության ու աղքատության մակարդակի գնահատումը պետք է լինի ճշգրիտ և ժամանակին: Աղքատության և անհավասարության մշտադիտարկումը պահանջում է մեթոդաբանության ու տվյալների հավաքման գործընթացի պարբերական վերանայում՝ բնակչության ներկա կարիքները, նախասիրություններն ու կենսամակարդակն արտացոլելու նպատակով:

Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը մշակված է Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից: Առաջին անգամ այն ներդրվել է 1996թ.-ին, այնուհետև վերանայվել է և կատարելագործվել 2004, 2009 և 2019թթ.-ին:

(1) 1996թ.-ից ի վեր, երբ Հայաստանում առաջին անգամ Համաշխարհային բանկի կողմից ներդրվեց տնային տնտեսությունների բարեկեցության ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանությունը, ԱՐՄՍՍՍՍ-ը՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, շարունակաբար ջանացել է կատարելագործել տնային տնտեսությունների մակարդակով հավաքվող տվյալների որակը և սեփական հմտությունը՝ աղքատության մակարդակի առավել ստույգ գնահատման նկատառումներով: Այդ ջանքերն արդարացված էին, քանզի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում հավաքված տեղեկատվությունը և վերջիններիս հիման վրա ստացված աղքատության մակարդակի քանակական գնահատականները շատ կարևոր ներդրում էին աղքատության հաղթահարման ռազմավարության ձևավորման և մշտադիտարկման տեսանկյունից, ինչի համար պատասխանատվությունը ստանձնել էր ՀՀ կառավարությունը:

(2) 2004թ.-ին ԱՐՄՍՍՍՍ-ը լուրջ քայլեր էր ձեռնարկել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) կատարելագործման և աղքատության մակարդակի գնահատման մինչ 2008թ.-ը կիրառվող մեթոդաբանությունն արդիականացնելու ուղղությամբ: Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ՝ բազմաթիվ խորհրդատվությունների և գործնական աշխատանքների արդյունքում (1) արդիականացվեց հետազոտության ընտրանքի ձևավորումն՝ օգտագործելով ՀՀ 2001թ.-ի մարդահամարի տեղեկատվական բազան, (2) ընդլայնվեց ընտրանքի չափը, ապահովելու համար տվյալների ներկայացուցչականությունը մարզային կտրվածքով, (3) վերանայվեց SSԿԱՀ հարցաշարը՝ արտացոլելու համար 1998/99 թթ.-ից 2003թ.-ը տեղ գտած տնտեսական և սոցիալական փոփոխությունները, ինչպես նաև հարցաշարում ավելացվեց զբաղվածության վերաբերյալ համապարփակ բաժին, (4) ավելի խորը վերապատրաստում անցավ հետազոտությունն իրականացնող անձնակազմը:

Սկսած 2007թ.-ից մինչև 2011թ.-ը՝ շնորհիվ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՄՀ-Հայաստան) համաֆինանսավորման, ընտրանքի չափը տարեկան կտրվածքով ընդլայնվեց, և 2006թ.-ի 5 184-ի

(միայն ՀՀ պետական բյուջեի հաշվին) համեմատ կազմեց 7 872 տնային տնտեսություն: Մակայն 2012թ.-ից ՀՄՀ-Հայաստան կազմակերպության փակման պատճառով ընտրանքի չափը նվազեց մինչև 5 184 տնային տնտեսություն:

ՀԲ-ն ԱՐՄՍՍՍՍ-ի խնդրանքով սպառման զամբյուղի ձևավորման և աղքատության գնահատման մեթոդաբանության մասով տեխնիկական խորհրդատվություն է տրամադրել դեռևս 2008 թվականին, երբ երկիրը 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով տնտեսական անկում էր ապրում:

2009-2018թթ. ժամանակահատվածում ՀՀ-ում աղքատության տարեկան գնահատումը հիմնված է եղել տնտեսությունում գների մակարդակի փոփոխությունների համեմատ աղքատության գծերի տարեկան վերանայման վրա՝ սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) կիրառությամբ: Թեպետ վերոնշյալով աղքատության գիծը համապատասխանեցվում է գնաճին, այս մոտեցումը հաշվի չի առնում ժամանակի ընթացքում բնակչության փոփոխվող վարքագիծն ու նախասիրությունները:

2019 թվականին ՀԲ-ն կրկին աշակցություն է ցուցաբերել ԱՐՄՍՍՍՍ-ին սպառման ազգային ազրեգատի և աղքատության գծերի ձևավորման ու վերանայման մասով՝ հիմնվելով տվյալ տարվա ՏՏԿԱՀ-ի տվյալների վրա: Վերահաշվարկված սպառման զամբյուղը և աղքատության գծերն արտացոլում են փոփոխություններն այնպիսի գործոնների մասով, ինչպիսիք են հայաստանյան հանրության շրջանում սպառման օրինաչափությունները, ծախսային վարքագիծը, ժողովրդագրական ցուցանիշների կառուցվածքը և այլն:

Նման ճշգրտումները բնական են և համապատասխանում են միջազգային լավագույն փորձին: ՀՀ-ում դինամիկ փոփոխվող հանրության շրջանում դրանք պետք է հաճախակի իրականացվեն (օրինակ՝ յուրաքանչյուր հինգ կամ վեց տարին մեկ):

2019 թվականի համար գնահատված աղքատության մակարդակները 2009 թվականի սպառման զամբյուղի և մեթոդաբանության վրա հիմնված աղքատության գնահատման ցուցանիշներից տարբերվում են երեք առումով.

ա) սպառման ազրեգացված ցուցանիշը հաշվարկվել է ՏՏԿԱՀ-ի վերանայված

հարցաշարի տվյալների հիման վրա¹,

բ) ՏՏԿԱՀ-ում կիրառվել է տվյալների հավաքման նոր մեթոդ՝ գրասալիկի (պլանշետ) միջոցով,

գ) փոփոխվել է աղքատության գծերի հաշվարկման մեթոդաբանությունը:

Մրանք կարևոր բարելավումներ են, որոնք համահունչ են կենսամակարդակի գնահատման միջազգային լավագույն փորձին, սակայն թույլ չեն տալիս ապահովել նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների հետ համադրելիությունը: Այդուհանդերձ, նոր մեթոդաբանությունն ավելի ճշգրիտ է արտացոլում տնային տնտեսությունների սպառման ծավալն ու կառուցվածքը:

ՀՀ-ում աղքատության գնահատականի հիմքում ընկած է «հիմնական կարիքների արժեքի» (ՀԿԱ) մեթոդը: ՀԿԱ-ի էությունը սպառման ՏՏԿԱՀ-ով փաստագրված այն զամբյուղի դրամական արժեքի գնահատումն է, որն անհրաժեշտ է տնային տնտեսությունների պարենային և ոչ պարենային հիմնական կարիքները հոգալու համար: Այս դրամական արժեքը կոչվում է «աղքատության գիծ»:

Աղքատ են համարվում այն տնային տնտեսությունները, որոնց սպառումը ցածր է այդ զամբյուղի արժեքից, այսինքն՝ գտնվում է աղքատության գծից ներքև: Մասնավորապես, ՀՀ-ում տնային տնտեսությունների բարեկեցության մակարդակը որոշվում է մեկ չափահաս անձի հաշվով՝ ընդհանուր ամսական սպառման արժեքով:

¹ Օրինակ՝ փոփոխվել է ընթացիկ ծախսերի, սպառման օրագիրը, և տնային տնտեսությունների կողմից սպառման վերաբերյալ տեղեկությունները հավաքվում են 14 օրվա ընթացքում՝ ՏՏԿԱՀ 2018-ում կիրառված 30 օրվա փոխարեն:

Տնային տնտեսության սպառման ագրեգացված ցուցանիշը (այսինքն՝ տնային տնտեսության մեկ չափահաս անձի հաշվով ընդհանուր ամսական սպառումը) հաշվարկվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով սպառման վերաբերյալ ՏՏԿԱՀ-ի միջոցով հավաքված տեղեկություններից, որոնք ներառում են մանրամասն տվյալներ ինչպես պարենային, այնպես էլ ոչ պարենային ապրանքների սպառման և ծախսերի վերաբերյալ:

Նոր մեթոդաբանությամբ փաստագրված աղքատության գիծը դրամական արտահայտությամբ ներկայացնում է (պարենային և ոչ պարենային) ապրանքների և ծառայությունների արժեքը, որն արտացոլում է տվյալ երկրում կենսամակարդակի նվազագույն մակարդակը:

Նվազագույն սպառման զամբյուղը ներառում է երկու բաղադրիչ՝ նվազագույն պարենային զամբյուղը և հիմնական ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների սպառումը:

ՀՀ-ում հաշվարկվում է աղքատության չորս տարբեր գիծ.

ա) պարենային աղքատության գիծ, որն արտացոլում է օրվա ընթացքում մեկ միջին անհատի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն էներգետիկ պահանջը (ՆԷՊ) բավարարող սպառումը (ՀՀ ժողովրդագրական առանձնահատկություններից ելնելով՝ 2019թ.-ին մեկ անձի համար օրական միջին ՆԷՊ-ը հաշվարկվել է 2 307 կիլոկալորայի (կկալ) չափով),

բ) աղքատության ստորին գիծ, որը հաշվարկվում է պարենային աղքատության գծին ավելացնելով հիմնական ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառման ցածր մասնաբաժինը,

գ) աղքատության վերին գիծ, որը հաշվարկվում է պարենային աղքատության գծին ավելացնելով հիմնական ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառման բարձր մասնաբաժինը:

դ) աղքատության միջին գիծ, որն աղքատության ստորին և վերին գծերի միջինն է:

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը Հայաստանում

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունն (ՏՏԿԱՀ) առաջին անգամ Հայաստանում անց է կացվել 1996թ.-ին (մեկ ամսվա ընթացքում), այնուհետև 1998/99թթ.-ին, և սկսած 2001թ.-ից այն իրականացվում է ամեն տարի: Հետազոտություններն իրականացվում են մեկ տարվա ընթացքում՝ տնային տնտեսությունների և բնակավայրերի ամենամսյա փոխարինմամբ (ռոտացիայով): Հետազոտության արդյունքները հիմնականում կիրառվում են երկրում սպառման վրա հիմնված աղքատության մակարդակի գնահատման համար, ինչպես նաև բնակչության կենսապայմանների վերաբերյալ այլ ցուցանիշների միջոցով արժեքավոր տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ սպառումը եկամուտների համեմատությամբ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ՝ հատկապես ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում: Սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությամբ ստացված տվյալների հիման վրա:

(I) Ընտրանքի ձևավորումը

2019թ.-ի ընտրանքի ձևավորման համար հիմք է հանդիսացել հանրապետության բոլոր մասնավոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը ստեղծվել է 2011թ.-ի ՀՀ մարդահամարի արդյունքների հիման վրա՝ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ: Ընտրանքի ձևավորման համար օգտագործվել է ներկայացուցչական հավանականային ընտրանքի մեթոդ:

Ընտրանքը կազմելու համար գլխավոր համակցությունը շերտավորվել է (բաժանվել է) 32 ստրատայի, որից 12-ը Երևանի վարչական շրջաններն են:

Մարզի մակարդակով բոլոր բնակավայրերը բաժանվել են երկու կատեգորիաների՝ քաղաքներ և գյուղեր:

Համաձայն այդ բաշխման, ձևավորվել է ըստ մարզերի և ք.Երևանի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք: Բոլոր մարզերը և ք.Երևանը, ինչպես նաև բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերն ընտրանքային համակցության մեջ ներառվել են ըստ երկրի բոլոր տնային տնտեսությունների կազմում այդ բնակավայրերում բնակվող տնային տնտեսությունների համամասնության: Առաջին փուլում ընտրվել են հաշվային տեղամասերը, այսինքն, ընտրանքի սկզբնական միավորները, որոնք պետք է հետագոտվեն մեկ տարվա ընթացքում: Համաձայն 2019թ.-ի ՏՏԿԱՀ ընտրանքի, քաղաքային բնակավայրերում ընտրվել է ամսական 30, իսկ գյուղական բնակավայրերում՝ 18 հաշվային տեղամաս:

Երկրորդ փուլում ընտրվել են հետագոտվող տնային տնտեսությունները: Յուրաքանչյուր ամիս հետագոտվել է 432 տնային տնտեսություն, որից 270-ը՝ քաղաքային և 162-ը՝ գյուղական բնակավայրերից: Յուրաքանչյուր ամիս դաշտային աշխատանքներն իրականացրել են 48 հարցազրուցավար, որոնցից յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությունը կազմել է ամսական 9 տնային տնտեսություն:

2019թ.-ին ընտրվել է 5 165 տնային տնտեսություն, որից 3 230-ը՝ քաղաքային, իսկ 1 935-ը՝ գյուղական բնակավայրերից: Հետագոտության տվյալներն ապահովում են նվազագույն ներկայացուցչականություն՝ մարզային կտրվածքով:

(II) 2008-2019թթ.-ի հետագոտությունների ընտրանքի չափը և բնակավայրերի ընդգրկվածությունը

Աղյուսակ 1. Հետագոտված տնային տնտեսությունների և ընտրանքում ընդգրկված գյուղական ու քաղաքային բնակավայրերի քանակը, 2008-2019թթ.-ին

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Հետագոտված տնային տնտեսությունների քանակը	7 872	7 872	7 872	7 872	5 184	5 184	5 184	5 184	5 184	7 776	5 184	5 165*
Ընտրանքում ընդգրկված քաղաքային բնակավայրերի քանակը	44	45	46	44	37	41	36	40	43	45	45	45

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Ընտրանքում ընդգրկված գյուղական բնակավայրերի քանակը	313	313	307	312	192	202	241	214	216	316	203	202

Աղբյուրը. ՀՀ ՏՏԿԱՀ 2008- 2019թթ.

*2019թ.-ին 19 տնային տնտեսության հարցումների արդյունքները բացակայում են տեխնիկական խնդիրների հետևանքով:

(III) Դաշտային աշխատանքների նկարագրությունը

Հետազոտության դաշտային աշխատանքների իրագործման համար կազմավորվել է 48 հարցազրուցավարից և 6 վերահսկող խմբագիրներից բաղկացած անձնակազմ, որոնց աշխատանքը վերահսկվել է Ծրագրի ղեկավարի կողմից: Նախքան հետազոտության սկիզբը, դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմի, հետազոտության վերահսկող խմբագիրների համար կազմակերպվել են համապատասխան ուսուցման (հրահանգավորման) աշխատանքներ:

2019թ.-ի հունվարի 1-ից սկսած՝ «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության» հարցաթերթը լրացվել է էլեկտրոնային տարբերակով՝ պլանշետով, հարցազրուցավարի կողմից՝ ամսվա ընթացքում առնվազն երեք անգամ տնային տնտեսություն կատարած իր այցելությունների ժամանակ: Տնային տնտեսության գլխավորի կամ այլ բանիմաց չափահաս անդամի հետ անմիջական հարցազրույցի ընթացքում հարցազրուցավարը հավաքել է տեղեկատվություն տնային տնտեսության կազմի, բնակարանային պայմանների, տնային տնտեսության անդամների զբաղվածության, կրթական մակարդակի և առողջական վիճակի, հողամասի, գյուղատնտեսական կենդանիների և գյուղտեխնիկայի առկայության ու օգտագործման, տնային տնտեսությունների միջև դրամական և ապրանքային հոսքերի և այլնի մասին:

Յուրաքանչյուր հարցազրուցավար տարվա ընթացքում աշխատել է 12 քլաստերում (հաշվային տեղամասում)՝ այցելելով 9 տնային տնտեսություն մեկ ամսվա ընթացքում:

Համաձայն հետազոտության մեթոդաբանության, տնային տնտեսությունը 14 օրվա ընթացքում ամեն օր վարել է տնային տնտեսության «Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» օրագիրը՝ թղթային տարբերակով, հարցազրուցավարը պարբերաբար իր այցելությունների ընթացքում հետևել է տնային տնտեսությունների կողմից օրագրի լրացման գործընթացին:

Լրացված օրագիրը հարցազրուցավարի կողմից մուտքագրվել է գրասալիկ (պլանշետ), կողավորվել և էլեկտրոնային տարբերակով լրացված հարցաթերթերի և ընտրանքի հաշվետվության հետ միասին սահմանված ժամկետում առցանց ուղարկվել է խմբագիրներին, ովքեր տվյալ ամսվա ընթացքում ստուգել են և անհամապատասխանությունների, սխալների դեպքում հարցաթերթերն առցանց վերադարձրել են հարցազրուցավարին շտկելու նպատակով՝ անհրաժեշտության դեպքում տնային տնտեսությունում կրկնակի հարցում իրականացնելու միջոցով:

Այնուհետև ստուգված հարցաթերթերը և օրագրերն ընտրանքի հաշվետվության հետ միասին առցանց ուղարկվել են Ծրագրի ղեկավարին հաստատման: Վերջինիս կողմից դրանք ընդունվել և արխիվացվել են: Մուտքագրված տեղեկատվության հիման վրա ստեղծվել է տվյալների բազա՝ օգտագործելով տվյալների մուտքագրման համար հատուկ ծրագրային փաթեթ:

2019թ.-ին հետազոտված յուրաքանչյուր տնային տնտեսության օրագիրը լրացնելու համար տրամադրվել է փոխհատուցման գումար՝ ՀՀ 1 000 դրամ:

Դաշտային աշխատանքների ընթացքում հարցազրուցավարներն այցելել են 9 185 հասցե, իսկ գրանցված հրաժարման միջին հանրապետական մակարդակը կազմել է 19.5% (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. 2019թ.-ին հետազոտված տնային տնտեսությունների քանակը և հրաժարման դեպքերն ըստ ք. Երևանի և մարզերի

Մարզեր	Լրացված հարցաթերթերի թիվը 2019թ.	Հրաժարման տոկոսը 2019թ.	Հրաժարման տոկոսը 2018թ.	Հրաժարման տոկոսը 2017թ.	Հրաժարման տոկոսը 2016թ.	Հրաժարման տոկոսը 2008թ.
ք.Երևան	1 403	34.3	32.3	30.4	19.7	18.9
Արագածոտն	315	2.5	1.3	1.6	0.8	2.6
Արարատ	432	12.4	10.8	12.2	6.1	7.5
Արմավիր	432	13.8	11.3	9.4	7.2	10.6
Գեղարքունիք	324	11.0	1.4	1.5	0.6	0.6
Լոռի	540	15.5	8.3	12.7	5.3	4.6
Կոտայք	324	21.3	16.6	11.8	6.9	2.3
Շիրակ	432	9.9	8.0	10.7	5.3	4.0
Սյունիք	324	8.7	1.6	2.8	0,5	2.2
Վայոց Ձոր	324	20.3	4.1	5.4	3.6	2.7
Տավուշ	315	5.5	1.7	3.4	5.1	2.9
Ընդամենը Հայաստանում	5 165	19.5	14.9	16.3	9.8	7.5

Աղբյուրը. ՀՀ ՏՏԿԱՀ 2019 (2008, 2016-2019թթ.)

Նշում. Հրաժարման տոկոսը հաշվարկվել է որպես հրաժարման դեպքերի հարաբերություն այցելած հասցեների քանակի նկատմամբ:

Հետազոտությանը մասնակցելուց հրաժարման դեպքերի տեսակարար կշիռը, որը հաշվարկվում է որպես հրաժարման դեպքերի հարաբերություն ընդամենը այցելած հասցեների նկատմամբ, զգալիորեն տարբերվում է ըստ մարզերի: Հրաժարման ամենաբարձր մակարդակը գրանցվել է ք.Երևանում (34.3%), ամենացածր մակարդակը (2.5%)՝ ՀՀ Արագածոտնի մարզում:

(IV) Հետազոտության գործիքների նկարագրությունը

Հետազոտության իրագործման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ գործիքները՝ «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության» հարցաթերթ և «Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» օրագիր:

«Կենսապայմանների ամբողջացված հետազոտության» հարցաթերթը սկսած 2019թ.-ի հունվարի 1-ից լրացվել է էլեկտրոնային տարբերակով՝ գրասալիկի (պլանշետ) միջոցով, հարցազրուցավարի կողմից՝ ամսվա ընթացքում առնվազն երեք անգամ տնային տնտեսություն կատարած իր այցելությունների ժամանակ:

2019թ. հարցաթերթը վերանայվել է և իր մեջ ներառում է հետևյալ հիմնական բաժինները. բոլոր անդամները, հիմնական բնակավայրից բացակայող անձինք (միգրացիա), կրթություն, առողջապահություն, զբաղվածություն, սոցիալական բացառում, բնակարանային և բնակության պայմաններ, պարենային ապահովություն, երկարաժամկետ օգտագործման ապրանքներ, սոցիալական աջակցություն, գյուղատնտեսություն և այլն:

«Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» օրագիրը, թղթային տարբերակով, լրացնում է տնային տնտեսությունը՝ 14 օրվա ընթացքում: Ամեն օր տնային տնտեսությունը գրանցում է սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարած իր բոլոր ծախսերը՝ տալով դրանց մանրամասն նկարագիրը, օրինակ՝ գնված սննդամթերքի համար նշվում է ապրանքի անվանումը, քաշը, արժեքը և այն վայրը, որտեղից գնվել է այդ ապրանքը: Բացի այդ, օրագրում տնային տնտեսությունը նշում է ինչպես սեփական հողից և գյուղատնտեսական կենդանիներից ստացված և օգտագործված սննդամթերքը, այնպես էլ այլ աղբյուրներից (սվեր, մարդասիրական օգնություն) ստացված սննդամթերքը: Օրագրում լրացվում են նաև գնված և անվճար ձեռքբերված ոչ պարենային ապրանքները և ստացված ծառայությունները:

Հետազոտությունից առաջ հարցաթերթն ու օրագիրը վերանայվել և համապատասխան ուղղումների են ենթարկվել: